Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
31.03.2014թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ 4505
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	33	0.7
դիմում	3829	84.9
բողոք	643	14.2
կրկնակի	383	8.5
կոլեկտիվ	44	0.9

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 935

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	852	18.9
բողոք	100	2.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	16	0.3
կոմունալ-կենցաղային	9	0.1
շինարարական	7	0.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.1
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	37	0.8
առողջապահության	53	1.1
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2470	54.8
օրենսդրական	1	

քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	90	1.9
ապարատային		
այլ հարցեր	1810	40.1
սեփականաշնորհում	14	0.3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2014Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 4505 նամակներից մոտ 0.7%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 14.2%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 84.9%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 54.8%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 1.9%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ

նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.3%-ը առնչվում է բնակարանային, 0.1%-ը կոմունալ-կենցաղային, 0.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 40.1% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 4314-ին տրվել է գրավոր, իսկ 126-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 65-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն